ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2021թ. N ----- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2803-րդ տարեդարձի և ծննդյան 75-ամյակի առթիվ, Երևան քաղաքի մշակույթի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, երաժշտարվեստում ունեցած հաջողությունների և երկարամյա մանկավարժական գործունեության համար դաշնակահարուհի, մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանը ծնվել է 1946թ. հոկտեմբերի 29-ին, Ալավերդի քաղաքում:

Սովորել է Ալավերդու Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրի դասարանում:

1959-1964թթ. շարունակել է երաժշտական կրթությունը սկզբում՝ Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցում, ապա՝ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում՝ Վաչե Ումր-Շատի դաշնամուրի դասարանում:

1964թ. ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, կրկին Վաչե Ումր-Շատի դաշնամուրի դասարան:

Սվետլանա Նավասարդյանը դափնեկիր է Շումանի, Բախի, Եղիսաբեթ թագուհու անվան և Սիդնեի միջազգային մրցույթների և պատահական չէ, որ նրա առջև շատ վաղ են բացվել աշխարհի ամենահեղինակավոր փառատոների և համերգասրահների դռները, ինչպիսիք են՝ Մոսկվայի Կոնսերվատորիայի Մեծ դահլիճը, Սիդնեյի «Opera House», Բրյուսելի «Palais des Beaux-Arts», Փարիզի «Gaveau», Լայպցիգի «Gewandhaus», Բուենոս Այրեսի «Teatro Colon», Տոկիոյի «Asahi Hall», Օսակայի «Phoenix-Hall», Ստոկհոլմի «Nybrokajen» և այլք:

Միջազգային հռչակ վայելող Սվետլանա Նավասարդյանի երաժշտական կարիերան լի է նաև անվանի երաժիշտների հետ համագործակցության բազմաթիվ դրվագներով՝ Եվգենի Սվետլանով, Վալերի Գերգիև, Վասիլի Սինայսկի, Կառլ Էտտի, Քրիստոֆեր Ուորեն-Գրին, Էլիսո Վիրսալաձե, Եվգենի Կիսին, Վլադիմիր Սպիվակով, Յուրի Բաշմետ և շատ ուրիշներ: Համերգներով հանդես է եկել աշխարհի ավելի քան հիսուն երկրում:

Սվետլանա Նավասարդյանը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հրավիրյալ պրոֆեսոր է, վարպետության դասեր է վարում աշխարհի տարբեր երկրներում:

1984թ. արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման: Պետական մրցանակի դափնեկիր է, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի և Պատվո շքանշանակիր:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով դաշնակահարուհի, մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Սվետլանա Նավասարդյանի մեծ ներդումը Երևան քաղաքի մշակույթի զարգացման գործում, երաժշտարվեստի բնագավառում ունեցած հաջողությունները և երկարամյա մանկավարժական գործունեությունը՝ առաջարկվում է Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՎԵՏԼԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սվետլանա Հովհաննեսի Նավասարդյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ